



**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ  
ԶԱՐԳԱՑՈՒՄ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

**ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

**ԹԵՄԱ**

Շարժախաղերի դերը երեխաների զարացման գործում

**ԱՌԱՐԿԱ**

Ֆիզկուլտուրա

**ՀԵՂԻՆԱԿ**

Մոսկվայի Լարինե Անդրանիկի

**ՄԱՐԶ**

Արմավիրի մարզ

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ**

Վաղարշապատի թիվ 12 հիմնական դպրոց

# Շարժախաղերի դերը երեխաների Ֆիզիկական զարգացման գործում

Խաղը մարդկային գործունեության ամենահետաքրքիր ձևերից մեկն է, այն ծագում է մանկության շրջանում և ուղեկցում մարդուն ողջ կյանքի ընթացքում: Խաղի ծագման, ընթացման, երեխաների կյանքում նրա տեղի և նշանակության, ավելի արդյունավետ օգտագործման և այլ շատ ուրիշ հարցեր՝ կապված խաղի հիմնահարցի հետ, հետաքրքրել և շարունակում են հետաքրքրել ոչ միայն հոգեբաններին և մանկավարժներին, այլ փիլիսոփաներին, հասարակագետներին, ազգագրագետներին կենսաբաններին և հոգեթերապևտներին:

Թեման արդիական է մեր օրերում, քանզի այժմ հասարակության լայն շրջանակներում մարդեն օգտվում են հոգեբանական ծառայություններից և հատկապես փոքր տարիքի երեխաներին հաճախ են տանում հոգեբանի մոտ այցելության: Իսկ այս տարիքի երեխաների հետ լավագույն միջոցը խաղն ու խաղաթերապիան է: Դպրոցներում, մանկական զարգացման կենտրոններում դասավանդողների պատրաստվածությունն այս թեմայով ևս շատ հրատապ ու կարևոր ենք համարում: Իսկ խաղաթերապիան խաղի կիրառումն է թերապիայում անձի զարգացման, հոբեշտկման, ներուժերի հաղթահարման, շփման հմտությունների ձևավորման, լարվածության թուլացման, սոցիալական դերերի յուրացման նպատակով: Կիրառվում է ինչպես երեխաների, դեռահասաների, այնպես էլ մեծահասակների հետ: Մենք նպատակ ունենք բացահայտել երեխաների մոտ խաղային թերապիայի ընթացքում հույզերի արտահայտման առանձնահատկությունները և օգնել նրանց ճանաչել իրենց հույզերը: Իսկ մեր նպատակն իրականացնելու համար մեր առաջ դրել ենք հետևյալ խնդիրները՝

.ուսումնասիրել խաղի հոգեբանությունը և խաղաթերապիան

.բացահայտել երեխաների հուզական վիճակը

.բացահայտել երեխաների լիցքաթափվելու և դրական հույզեր ստանալու կարողությունները

.բացահայտել երեխաների ագրեսիվության մակարդակը

.բացահայտել երեխաների մոտ առկա բացասական հոլզերը և դրանք արտամղելու կարողությունները

Երեխան տիրապետում է բնակա շարժումների՝ քայլք, վազք, ցատկ, նետում, մագլցում, սողանցում, քայլում է սահմանափակ հենման մակերես ունեցող նստարանի, տաղտակի, գերանի, վրայով:

Շարժումների, շարժախաղերի ճիշտ կատարումը նպաստում է երեխայի ոսկրային, մկանային, նյարդային, սիրտ-անոթային, շնչառական համակարգերի ներդաշնակ զարգացմանը, առողջության ամրապնդմանը:

Շարժախաղերի հիմնական խնդիրն է՝ զարգացնել

.շարժողական ակտիվությունը

.համարձակությունը

.ընկերներին օգնելու, համագործակցելու կարողությունները

.կամքը և ուշադրությունը

.մշակել արագաշարժություն, ճկունություն

.արագ կողմնորոշվելու, դժվարությունները հաղթահարելու ընդունակություններ

Ֆիզկուլտուրայի պարապմունքի հիմնական մասում ուսուցանվում են ընդհանուր զարգացման վարժություններ, որոնք ամրապնդվում են շարժախաղերի միջոցով:

Յուրաքանչյուր պարապմունքի հիմնական մասում պետք է տրվի մեկ շարժախաղ՝ մեծ կամ միջին շարժունակության: Հիմնական մասի տևողությունն է 15-20 րոպե:

Եզրափակիչ մասի խնդիրն է՝ հիմնական ծանրաբեռնվածությունից հետո երեխայի օրգանիզմը բերել ավելի հանգիստ վիճակի, վերականգնել սրտի զարկերակի թիվը, շնչառությունը: Այս մասում տրվում են հանգիստ խաղեր կամ քայլք: Այն տևում է 2-3 րոպե:

Նախադպրոցական տարիքն ունի բացառիկ նշանակություն երեխաների ֆիզիկական, հոգեկան զարգացման համար: Այս տարիքն աչքի է ընկնում բազմաթիվ նորագոյացումներով, որոնց ի հայտ գալը սերտորեն կապված է նոր գործունեության տիպերի ծագման և զարգացման հետ: Այդ տիպերին են պատկանում երեխաների

արդյունավետ գործունեության տարբեր ձևերը, աշխատանքային, ուսումնական և առավել ևս խաղային գործունեությունը:

Խաղի Էական, կարևոր նշանակությունն այն է, որ երեխան կանգնում է ուրիշ մարդու դիրքերի վրա, կարծես թե նայելով աշխարհին նոր՝ մեծահասակի տեսանկյունից, որի դերը նա կատարում է: Խաղը մասնավորապես ցածր դասարաններում նպաստում է երեխաների բազմակողմանի՝ մտավոր, բարոյական, գեղագիտական, ֆիզիկական, աշխատանքային դաստիարակականությանը: Ղեկավարելով խաղը ուսուցիչը ներագրում է երեխաների գիտակցության, զգացմունքների, վարքի, կամքի, իմացական գործընթացների՝ ընկալման, հիշողության, ուշադրության, երևակայության, խոսքի, մտքի, ինչպես նաև դիտունակության զարգացման վրա: Մեծ է խաղի դերը երեխաների զարգացման գործում: Այստեղ ճշտվում և խորացվում են երեխաների գիտելիքները, պատկերացումները: Տանը և դպրոցում ստացած գիտելիքները խաղում պրակտիկորեն կիրառվում և զարգանում են: Երեխան սկսում է մտածել տեսածի, լսածի մասին և շատ երևույթների իմաստը, նշանակությունը ավելի պարզ է դառնում նրան: Խաղի ընթացքում երեխան ձգտում է շտկել՝ խորացնել իր գիտելիքները, որը և արտահայտվում է նրա հարցերում: Խաղի ընթացքում երեխաների մտավոր ակտիվությունը միշտ կապված է երևակայության հետ:

Խաղն ունի բացառիկ նշանակություն երեխաների բարոյական հատկությունների ձևավորման հարցում: Խաղի ընթացքում երեխան յուրացնում է հասարակական վարքի նորմերը, մարդկանց վերաբերմունքը աշխատանքի նկատմամբ, նրանց փոխհարաբերությունները: Խաղը յուրահատուկ դպրոց է, ուր որոշակիորեն ձևավորվում է հենց իրենց՝ երեխաների հասարակական վարքը, նրանց վերաբերմունքը կյանքի և միմյանց նկատմամբ: Այստեղ դրսևորվում և ամրապնդվում են այնպիսի հատկություններ, ինչպիսիք են զսպվածություն, համարձակություն, ազնվություն: Այն երեխաները որոնց շարժողական ակտիվությունը սահմանափակ է, հաճախ առողջական խնդիրներ են ունենում: Հայտնի է նաև, որ երեխայի կողմից ֆիզիկական վարժությունների կատարումը ոչ միայն մեծացնում է նրա շարժողական ակտիվությունը այլև խթանում է մտավոր զարգացումը, բարձրացնում է հուզականությունը, զարգացնում է կոլեկտիվիզմի զգացում և կանոններով գործելու կարողություն: Բոլոր երախաների նկատմամբ անհրաժեշտ է դրսևորել հարգանք և նրանց վերաբերվել, որպես ունակ անհատներ, որոնք կարող են հասկանալ իրենց շրջապատող աշխարհը, ընտրություն կատարել և արտահայտել իրենց սեփական կարծիքը:

Ուսուցման մեթոդներ/ճանապարհ/,փոխներգործուն գործընթաց ուսուցչի և աշակերտի միջև,ինչի արդյունքում տեղի է ունենում գիտելիքի , հմտությունների և կարողությունների փոխանցում ու յուրացում նախատեսված ուսումնառության բովանդակությամբ: Ուսուցանվող նյութի ընկալում, կարճաժամկետ փոխազդեցություն դասավանդողի և աշակերտի միջև՝ ուղղված կոնկրետ գիտելիքի , հմտության և կարողության փոխանցման ու յուրացմանը:

Մեթոդները դասակարգում են 3 խմբի

1.Բանավոր, տեսողական, գործնական

2.Վերարտադրողական, բացատրական-ցուցադրական, որոնողական,հետազոտական

3.Ինդուկտիվ և դեդուկտիվ

Ուսուցման պրակտիկայում գոյություն ունեն և այլ մոտեցումներ՝ դասակարգելու ուսուցման մեթոդներ, որոնք հիմնված են մատուցվող նյութն ընդունելու գիտակցականության աստիճանի վրա՝ պասսիվ, ակտիվ, ինտերակտիվ և այլն: Գործընթացը չի կարող լինել պասսիվ ու նաև միշտ չէ, որ այն սովորողների համար իրենից հայտնագործություն է ներկայացնում:

Պասսիվ մեթոդ. սովորողի և դասավանդողի փոխադարձ գործունեության ձև, որտեղ դասավանդողը գլխավոր դերակատարն է:

Ակտիվ մեթոդ.սովորողի և դասավանդողի փոխադարձ գործունեության ձև,որտեղ դասավանդողը ու սովորողը փոխազդում են միմյանց վրա կրթական գործունեության ընթացքում:

Ինտերակտիվ մեթոդ. նշանակում է փոխներգործել, գտնվել ինչ որ մեկի հետ երկխոսության մեջ:

Ֆիզիկական կուլտուրայի ձևերի և միջոցների անցկացման վայրը

		Անցկաման ժամանականհատվածը և քանակարը
--	--	--------------------------------------

Յ/Յ	Ֆիզիկական կուլտուրայի ձևերը և միջոցները	2020-2021 սեպտեմբեր-դեկտեմբեր		2022	2022 փետրվար-հունիս	
		Աշխատանքային օրեր	Շաբաթ կիրակի	հունվար	Աշխատանքային օրեր	Շաբաթ կիրակի
1	Առավոտյան հիգիենիկ մարմնամարզություն	80	32	30	100	40
2	Ֆիզկուլտուրային պարապմունքներ	48	32	30	60	40
3	Համատեղ ֆիզիկական վարիժություններ	-	32	30	-	40
4	Շարժախաղեր	80	32	30	100	40
5	Զբոսանք	160	64	60	200	80
6	Մերսում	-	32	15	-	40
7	Կոփում	80	32	30	100	40

Ֆիզիկական կուլտուրայի նշված ձևերն ու միջոցները առաջարկվում էր ընտանիքի անդամներին առավելապես կիրառել շաբաթ ,կիրակի և արձակուրդային օրերին: Յուրաքանչյուր ծնողի հնարավորություն ընձեռնվեց ունենալ «Երեխայի զարգացման ընթացքի տետր» ,որում ծնողները ըստ երեխայի տարիքի նշումներ էին կատարում նրանց ֆիզիկական զարգացման , հիմնական շարժողական գործողությունների վերաբերյալ:

Ծրագրերի իրականացման ընթացքն ուսումնասիրելու նպատակով գիտափորձից առաջ և հետո հարցում ենք սնցկացրել փորձարարական խմբի երեխաների ծնողների և ընտանիքի մեծահասակների շրջանում:

Բացահայտվեց, ու գիտափորձից հետո Էական տեղաշարժեր են կատարվել առաջադրված ֆիզիկական դաստիարակության միջոցների և ձևերի կիրառմամբ ուղղությամբ: Եթե մինչ գիտափորձը ծնողների միայն 6,1 տոկոսն էր հաճախակի զբաղվում երեխաների հիգիենիկ մարմնամարզությամբ, ապա գիտափորձից հետո 75,4 տոկոսն սկսեցին զբաղվել պարբերաբար:

Շարժախաղերը հանդիսանում են կրտսեր դպրոցի երեխաների ֆիզիկական դաստիարակության կարևոր միջոցներից մեկը: Երեխաների կյանքում հետաքրքիր և ուրախ խաղերը մեծ նշանակություն ունեն: Բակում, թե հրապարակում, անտառում խաղերն անբաժան են երեխաներից:

Խաղերի միջոցով զարգանում են երեխաների ըմբռնողականությունը և ուշադրությունը, դիտողականությունը և հիշողությունը, ամրապնդվում և ընդլայնվում են դպրոցում ձեռք բերած գիտելիքները: Երեխաները վարժվում են վազքի և ցատկի մեջ, զարգացնում են մկանները:

Խաղերն իրենց բազմակողմանի դրական ազդեցությամբ ոչ միայն դաստիարակության միջոց են, այլև հանքստի ակտիվ ձև: Դրանք բարձրացնում են երեխաների կենսունակությունն ու աշխուժությունը, զվարճացնում և ստեղծում են ոչ ստիպողաբար մտերմիկ փոխհարաբերություններ: Խաղերի ժամանակ, շարժումների հետ կապված, սիրտն ու թոքերը ավելի լավ են աշխատում, արագանում է արյան շրջանառությունը: Խաղերը նպաստում են բնավորության դրական գծերի ձևավորմանը: Խաղի մասնակիցներից պահանջվում է կայունություն և ձգտում դեպի նպատակը, համարձակություն, նախաձեռնություն, հնարամտություն, ընկերական փոխհարաբերություններ, գիտակցաբար կարգ ու կանոնի ենթարկվել, ազնվո՞ւն են կատարել կամավոր ընտրած կանոնները: Խաղերը նաև գեղագիտական դաստիարակության կարևոր միջոցներ են: Շարժախաղերի անցկացման ժամանակ անհրաժեշտ է պահպանել անվտանգության կանոնները, եթե դրանք անցկացվում են մարզադահլիճում, ապա այն ազատել մարզագործիքներից, իսկ եթե անցկացվում են բաց խաղահրապարակում, ապա այն պետք է լինի հարթ, մաքուր և նշագծված: ՈՒՒսուցիչը սկզբում պարզ ու հակիրճ ձևով պետք է բացատրի կամ հիշեցնի խաղի կանոնները, առանձին գործողությունները, անհրաժեշտության դեպքում նաև ցուցադրի, այնուհետև կազմակերպի խաղը և հետևի կանոնների պահպանմանը: Խաղի ընթացքում երեխաները ստանալով մեծ բովանդակություն, դրսևորում են ազատ ստեղծագործական գործունեություն, որին մասնակցում են երեխայի հոգեկան ամենա տարբեր բաղադրիչները՝ զգացողությունը,

ըմբռնողականությունը, մտածողությունը, երևակայությունը, հիշողությունը, ուշադրությունը, կամքը, հույզը և մկանների լարումը: Խաղերը բազմազան են իրենց բնույթով և միմյանցից տարբեր: Բազմատեսակ խաղերից երեխաների շրջանում ավելի շատ են տարածված շարժուն խաղերը: Խաղը պետք է լինի մատչելի տվյալ տարիքի ամեն երեխայի համար թե իր կանոնների բարդության , թե ծավալով, թե գործողությամբ: Խաղի ղեկավարները չպետք է երեխաներին տան միայն այն խաղերը, որոնք հետաքրքրում են նրանց և դուր են գալիս: Խաղն ընտրելիս պետք է ելնել մանկավարժական ընդհանուր սկզբունքներից, բարդեցնել աստիճանաբար, հեշտից անցնել դժվարին, պարզից՝ ավելի բարդին: Դա վերաբերում է թե խաղի կանոններին և թե երեխաների խաղալու կարողությունների զարգացմանը, որին երեխան պետք է հասնի աստիճանաբար, սխտեմատիկ ուսուցման միջոցով: Խաղերն ուղեկցում են երեխայի սկսած վաղ մանկական հասակից մինչև երիտասարդական հասակը: Խաղալով իր հասակակիցների հետ երեխան գործնականում հասկանում է կոլեկտիվ գործունեության անհրաժեշտությունը, նրա մեջ զարգանում է ընկերասիրություն , համերաշխություն, ազնվություն , կարգապահություն: Յուրաքանչյուր խաղ պետք է ունենա նպատակը: Խաղեր կան , որոնք նպատակաուղղված շարժողական ընդունակություններին, մշակում են ճարպկություն, խաղեր՝ որոնք մշակում են ուժ, ցատկունություն, մեկ այլ խաղեր՝ շարժողական կարողություններ:

Այսպիսով, խաղերն ընտրելիս և ուսուցանելիս դաստիարակ-մանկավարժը պետք է որոշակի կերպով իր առաջ հարց դնի, թե տվյալ խաղն ուսուցանելով, նա ինչ է ուզում դաստիարակել երեխայի մեջ: Կարևոր է , որ ընտրված խաղին համապատասխանի միջավայրն ու գույքը: Գույքը նույնպես վճռական դեր ունի խաղի մեջ: Խաղն ուսուցանելուց առաջ պետք է պահանջվող պատրաստ լինի: Կարևոր խնդիրներից մեկն էլ այն է , որ խաղը ճիշտ և մատչելի բացատրվի և ուսուցանվի, քանի որ երբեմն խաղը թերի բացատրելու հետևանքով այն դառնում է անհետաքրքիր և ձանձրալի: Խաղի ընթացքում պետք է ուշադիր հետևել, որ կանոնները՝ ճշտությամբ կիրառվեն: Շարժուն խաղերն ընտրելիս պետք է ուշադիր լինել խաղի տևողությանը, ճշտությամբ կիրառվեն: Շատ կարևոր է, թե ինչպես, ինչ մեթոդով կներգրավվեն նրանք սպորտի մեջ: Սակայն, մինչև երեխան գիտակցի, որ իրեն սպորտն անհրաժեշտ է այնքան, որքան ամենուրյա սնունդը և ավելի քան ամենուրյա առարկայան ուսուցումը, մեծ ջանքեր կպահանջվեն նրան մարզական ճկուն և ռիթմիկ վիճակի բերել հասցնելու համար: Նախադպրոցական ու դպրոցական տարիքում է ձևավորվում մարդու շարժողական պատրաստության և առողջության հիմքը:



Մեծահասակների ընդհանուր առմամբ մեծ դեր և ազդեցություն ունեն երեխաների աճի և զարգացման վրա: Շարժախաղերը ամբողջությամբ կազմված լինելով տարբեր բնույթի շարժումներից՝ ակտիվ աշխատանքի մեջ է ընդգրկում երեխայի օրգանիզմը՝ բարելավվում է գլխուղեղի աշխատանքը, սրտի և շնչառության համակարգերի գործունեությունը, արագանում է նյութափոխանակությունը, ամրանում են հողակապերը, ջլերը, մեծանում է ողնաշարի ճկունությունը:

Շարժախաղերի միջոցով երեխան ճանաչում է իր մարմինը, բացահայտում է իր շարժողական կարողությունները, դաստիարակվում է բարոյական որակներով, համագործակցելու հմտություններ:

Սահմանափակ շարժողականությունը օրգանիզմը դարձնում է ավելի խոցելի՝ հիվանդությունների նկատմամբ: Ժամանակակից երեխաները ավելի քիչ են շարժվում, քան նախկինում: Հեռուստացույցի և համակարգչային խաղերի հանդեպ ցուցաբերած հետաքրքրությունը շարժունակության նվազեցման պատճառ է հանդիսանում: Ըստ շարժումների քանակի և ֆիզիկական ծանրաբեռվածության՝ տարբերում ենք մեծ, միջին և քիչ շարժողականություն պահանջող խաղեր:

Երեխայի զարգացման գործում հսկայական է խաղի առաջատար գործունեության դերը: Խաղի ծագման, էության երեխաների կյանքում նրա տեղի և նշանակության, առավել օգտագործման և այլ շատ ուրիշ հարցեր՝ կապված հիմնահարցի հետ, հետաքրքրել փիլիսոփաներին, պատմաբաններին, հոգեբաններին, մանկավարժներին:

Դեռ անցյալ դարի կեսերին ՌԻՀինսկին խաղի նշանակության մասին արտահայտեց այնպսի մտքեր, որոնք չեն կորցրել իրենց արժեքն այսօր: Նա գտնում էր, որ խաղը թույլ է տալիս տեսնելու ու ճանաչելու երեխաների հոգին, այն նպաստում է երեխաների դաստիարակությանն ու զարգացմանը: Խաղի մեջ երեխան փորձում է իր ուժերը, դառնում ինքնուրույն: Այստեղ երեխան յուրահատուկ ձևով վերարտադրում է այն, ինչը տեսնում է շրջապատում: ՌԻՀինսկին խաղը դիտում է որպես երևակայության դրսևորման միջոց: Խաղերի և խաղային գործունեության սոցիալական բնույթը պայմանավորված է նրանով, որ երեխան ապրում է հասարակության մեջ, որի ակտիվ անդամն է: Կյանքի առաջին ամիսներից փոքրիկը ձգտում է շփման մեջ մտնել շրջապատողների հետ: Խաղը մանկության պարտադիր ուղեկիցն է, որն իհայտ է գալիս որոշակի տարիքային փուլում: Ներկայումս կուտակված են բավականին շատ փաստեր, համաձայն որոնց երեխաների խաղն իր ծագումով սոցիալական է, հետևաբար սոցիալական է նաև իր

բովանդակությամբ: Ուստի խաղը ժառանգաբար ֆիքսված վարքի բնագոյային ձև չէ, նրա ծագումը կապված է հասարակության մեջ երեխաների կյանքի կոնկրետ պայմանների հետ:

Խաղը երեխաների ճանաչողական հնարավորությունների ընդլայման հատուկ գործոն է: Այստեղ առաջին պլանում դրված են հուզական ապրումները, իրականության ոլորտների զգացմունքային, կերպարային յուրացմանը: Երեխայի խաղն աչքի է ընկնում որոշակի առանձնահատկություններով: Նրանցից հիմնական այն է, որ խաղը երեխաների կողմից շրջապատող կյանքի՝ մեծերի գործողությունների, գործունեության, նրանց փոխհարաբերությունների արտացոլումն է, ընդ որում, այնպիսի պայմաններում, որոնք ստեղծվում են երեխաների երևակայությամբ: Խաղի առանձնահատկություններից է այն, որ երեխան հավատում է և ճշմարիտ է համարում հորինված խաղի բովանդակությունը: Խաղի նշված բնույթն է, որ տարբերում է այն մանկական գործունեության մյուս տեսակներից և ինչ-որ չափով մոտեցնում արվեստին, իրականության կերպարային արտացոլմանը:

Խոսելով այն մասին, որ խաղում երեխան արտահայտում է իրական, ռեալ գործողություններ, անհրաժեշտ է միևնույն ժամանակ հիշել, որ դա ստույգ կրկնորինակ, կոպիտ հայելային արտացոլում չէ: Այստեղ խիստ արտահայտված ձևով խախտվում է ժամանակը ու տարածությունը, երեխան խաղի ընթացքում սահմանափակված չէ ռեալ իրադրության բոլոր կոնկրետ պայմաններով, գործողությունների խիստ հաջորդականությամբ:

Ինքնագործ բնույթը խաղի մյուս առանձնահատկություններից է: Երեխաները իրենք են ստեղծում խաղերը, ուր դրսևորվում են նրանց գիտելիքները կյանքի երևույթների և իրադրությունների մասին, ինչպես և երեխաների վերբերմունքը դրանց նկատմամբ: Խաղի կարևոր յուրահատկություններից է նաև այն, որ խաղային գործունեությունը, կերպարը և խոսքը հանդես են գալիս միասնական, կապակցված ձևով: Ընդ որում սա խաղի ոչ թե արտաքին հատկությունն է, այլ նրա բուն էությունը:

Երեխան խաղում շատ անմիջական է և անկեղծ: Նա ապրում է իր հերոսի գործողություններով և հույզերով: Կերպարը հաճախ այնպես է գայթակղում երեխային, որ նա նույնիսկ չի պատասխանում երբ նրան դիմում են անունով:

Խաղային գործընթացում ուրույն նշանակություն ունի խոսքը, քանի որ երեխան երբեք լուռ չի խաղում: Խոսքը կարծես նվազակցում է խաղային գործունեությանը, օգնում ավելի

լիարժեք բացահայտելու կերպարը, դրսևորելու վերաբերմունքը նրա նկատմամբ: Նույնիսկ այն դեպքում, երբ երեխան մենակ է խաղում: Այսպիսով, կերպարի, խաղային գործողությունների և խոսքի միասնականությունը խաղային գործունեության առանցքն է, որը նպաստում է իրականության արտացոլմանը: Խաղերն իրենց բովանդակությամբ կարող են ոչ միայն դրական, այլև բացասական ազդեցություն ունենալ երեխաների վրա: Օրինակ կան այնպիսի խաղեր, որոնք նպաստում են ատելության, կոպտության, դաժանության առաջացմանը և նյարդային համակարգի վրա բացասական ազդեցություն է թողնում: Վատ խաղերն ինչպես և լավ խաղերն ունեն իրենց սովորությունները և երկար են ապրում: Վատ խաղերը հիմնականում արտացոլում են հին կենցաղի, հի հարաբերությունների մնացորդները, որոնք վերջնականապես արմատախիլ չեն արված մարդկանց գիտակցությունից և կյանքից: Որպեսզի անցանկալի, բացասական խաղեր չառաջանան, երեխաներին սովորեցնում են տարբերել լավը վատից: Շրջապատող կյանքը խաղերում արտացոլվում է կերպարի, դերի միջոցով: Այստեղ օգնության է գալիս երևակայությունը, որի շնորհիվ նախկինում ստացած տպավորությունների հիման վրա ստեղծվում են կերպարները:

Սեռական տարբերությունները շարժողական պարտականության առումով դպրոցականների մոտ սկսում են դրսևորվել սկսած 3-4 թղ դասարանից և տարիքի հետ այդ դրսևորումը մեծանում է ինչի մասին են վկայում ուսումնասիրվող շարժողական ընդունակությունների բացարձակ արժեքները:

Սույն հետազոտության համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում սեռական երկձևության ուսումնասիրումը տարբեր շարժողական ընդունակությունների դրսևորումներում: Այս հարցում առաջարկում են մի շարք մեթոդիկաներ: Սակայն այդ մեթոդիկաներն ուղղվծ են անհատի հոգեբանական բնութագրերի կամ սոցիալական երևույթների ուսումնասիրմանը:

Մանկության առաջին տարիները մարդու կյանքի ողջ ընթացքի համեմատ շատ կարճ են, սակայն անկրկնելի և վճռորոշ են իրենց նշանակությամբ: Երեխայի զարգացման վաղ տարիներն են տեղի ունենում անհատի բնավորության հիմնական գծերի, ընդունակությունների, ազգային, ընտանեկան ավանդույթների և սովորությունների կրողի նպատակաուղղված ձևավորումն ու զարգացումը:

Ներկայումս երեխաների առողջության ամրապնդման և պահպանման խնդիրն ընդգրկում է յուրաքանչյուր պետության ռազմավարական ծրագրերում:

Հայտնի է ,որ երեխայի առողջության ,ֆիզիկական , սոցիալական զարգացման և շարժողական գործողությունների ձևավորման հիմքը դրվում է վաղ հասակից՝ հիմնականում ընտանեկան դաստիարակության շնորհիվ:

Ծննդյան առաջին իսկ օրվանից երեխայի խնամքը,նրա սնման ,ֆիզիկական,մտավոր և սոցիալական արգացման գործընթացի ճիշտ կազմակերպումը ծնողներից պահանջում է անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ, հմտություններ,դիրքորոշումներ և համոզմունքներ:

Օգտվել եմ այս գրականությունից՝1.Ալեքսանյան Է.,Այվազյան Լ.,Алехин Давидов Евтеев Вашетина Кулагина Бендас Ильин Аршавский Безруких Эльконин.